

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ:
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ.—ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժողովրդական տօնը Գերմա-
նիայում. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԻՐ.—
ՀԵՌԱԳԻՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Էվելինա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Շաբաթ օր, 5-ին հոկտեմբերի, կայացաւ Թիֆ-
լիսի քաղաքային թատրոնում պ. պ. Նիկողայրեան
և Ս. Սիմոնիսի կողմէն, մասնակցութեամբ
օր. Սալեիլիայի: Թատրոնում ներկայ գտնված
թէ և զգալիորէն փոքրաթիւ հասարակութիւնը
համոզվեց, որ մեր ասածները մեր երիտասարդ
երգիչ պ. Նիկողայրեանի մասին կատարելապէս
միջոց էին: Նրա արտակարգ բարիտոն ձայնը,
նրա ձայնի մետաղական հնչիւնը, երգեցողու-
թեան ժամանակ նախադասութիւնների նրա օրը
և պարզ արտասանութիւնը (фразировка), նրա
երաժշտական ճաշակը, այդ բոլորը հիացրեց ա-
մենքին: Բայց հասարակութիւնը դարձեալ պա-
հանջում է, որ այդ ճշմարտութիւններն ասե՛ր
կամ արտասանանան մի լրագրի, կամ ուսուցիչ
մարաքաղաքի մի թերթի, և ոչ թէ հայերէն
«Մշակ» լրագիրը... Երբ մենք ենք ասում, դա
բաւական չէ և հասարակութիւնը չէ լցնում
թատրոնի դահլիճը: Իսկ եթէ նոյն խօսքերը
գրված լինէին մի օր և է արտասանանան, կամ
մարաքաղաքի լրագրում, այն ժամանակ թատ-
րոնը կատարելապէս լի կը լինէր: Սակայն հասա-
րակութիւնը այժմ համոզվեց, որ օրինակ «Կա-
մէ» օպերայից վերջում յայտնի արիան և «Се-
вильский цирюльник» օպերայի հուշակաւոր
կախարհային Նիկողայրեան այնպէս երգեց, որ
շատ քիչ էր պատահում լսել ուրիշ երգիչներից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՎԷԼԻՆԱ

Ուղի ժամի 7-ին, սրտի անկարգութիւնի բա-
ժանմամբ, եւ զանգահարում էի Էվելինայի բնա-
կարանի դրան: Աղաթիւնը բաց արեց ինձ բնա-
կարանի դուռը և յայտնեց որ թէ և օրիորդը դեռ
եւ տանը չէ, բայց հրամայեց, որ երբ ես դամ,
նկրտ խնդրեմ ինձ...:

—Երբ կը գայ օրիորդը:
—Շատ շուտ, մի քանի րոպէից յետոյ, պա-
հուն...:

Դարձեալ քան ի՞նչ սպասել: Այդ քանի րո-
պէս ինձ անքի էլ երկար թվաց, քան առաւօ-
տից մինչև երեկոյան եօթ ժամ սպասելը...:

Վերջապէս Էվելինա մտաւ և անմիջապէս նե-
րսեց ինձ խնդրեց ինձանից, որ փոքր ինչ սպա-
սել տուեց ինձ: Նա յուզված էր երեւում, բայց
աշխատում էր ծածկել իր յուզմունքը:

—Ի՞նչ ունէի և այնտեղից սաստիկ շտապում
էի, որպէս զի ձեզ երկար սպասել չը տամ...
Եւ ասա սաստիկ յոգնեցայ, զրեթէ չնշասպառ
հասայ տուն...:

Նա այդ խօսքերը աշխատում էր արտասանել
անտարբեր ձեով, հայելիի առջև կանգնելով ու
զննարկը հանելով:

—Հա, բարեկամ այդ ինչ պաշտօնական
անակցութիւն էր պահանջել ինձանից, վրա բե-
րեց նա յանկարծ...:

—Ոչինչ, ես չուտով հեռանում եմ Նիցցայից

Իսկ ինչ վերաբերում է միւս երիտասարդ երգ-
չին, պ. Սիմոնիսին, մենք այսքան կասե՛նք, որ
պարտնի ձայնը շատ մշակված է, երգիչն ունի
լաւ դիրք, զիտէ կատարելապէս վարվել իր
ձայնի հետ, բայց ինքն ձայնը, զգալիորէն,
զուրկ է որ և է մետաղական հնչիւնից և խուլ
հնչիւն ունի:

ԹԷՄԱՅԻՑ մեզ գրում են. «Տեղական հայոց
Բարեգործական ընկերութեան բաժինը հայոց
հին ուսումնարանի դահլիճում հիմնել է մշտա-
կան բնի, որտեղ վրաց սիրողները և դերասան-
ները յաճախ ներկայացումներ են տալիս: Տեղա-
կան հայ սիրողներն էլ մտադիր են մօտ ժամա-
նակներում մի ներկայացում տալ հայերէն լե-
զուով, սակայն սիրողներին դժուարութեամբ
են ձգտում: Մեզ մօտ առհասարակ հայերէն
խօսողներ շատ փոքրաթիւ են»:

«Մուրճ» ամսագրում կարդում ենք հետեւեալը:
«Արդէն կէս տարին մտնելում է այն օրից, երբ
Հայաստանեայց Եկեղեցու Մայր Աթոռ թափուր
է մնացել: Գալ 1892 թվականի մայիսի 3-ին
Հայաստանեայց Եկեղեցու բոլոր թեմերի հոգեւո-
րական և թէ աշխարհական պատգամաւորները,
Ս. Էվմիամնի միաբանութիւնը և պիտոյի
անդամները, հաւաքված միասին Ս. Էվմիամ-
նում, կատարելու են կաթողիկոսական ընտրու-
թիւնների միջոց, պատասխանատու և նույն-
րական գործը: Ազգը, որպէս հասկանալի է, սպա-
սում է իր քաղաքական և հասարակական մասու-
րից օրա կարծիքները թեկնածութեան համար
առաջարկելը անձնաւորութիւնների մասին: Հայ-
կական մամուլը կոչված է, որպէս ամեն դէպքե-
րում, եւ առաւել մի այսպիսի ծանրակշիւ գոր-
ծում աղդէն օգնել իր յորհուրդներով, որպէս զի
ընտրութիւնը ընկնի ազգի թէ հոգեւորական և թէ
աշխարհական դասակարգերի ամենից մեծ վստա-
հութիւնը վայելող հոգեւոր անձերի վրա: «Մուրճ»

և կարծեմ շատ բնական էր իմ կողմից ձեռք տես-
նելու և մնաք բարեկամ ցրտեսութիւն ասելու
ցանկութիւնը:

—Այո, ես ինքս կը ցաւէի, եթէ ձեր գնալուց
առաջ չը տեսնէի ձեզ, բայց ինչ կը նշանակէ
պահանջել, որ ոչ չը լինի ինձ մօտ և մենք
երկուսով անպատճառ մենակ լինե՛ք, աւելացրեց
նա դարձեալ հայելիի առջև կանգնած, իր ձեռ-
նոցները հանելով ու մի մի անգամ իր ձեռն մա-
ղերն ուղղելով:

—Ձեզ մենակ տեսնել կարծեմ նմանապէս բը-
նական ցանկութիւն էր իմ կողմից, Էվելինա, քա-
նի որ մի ամբողջ ամառ ընթացքում ես ձեզ
մի տանն իջեցի, կամ մի քառորդ ժամից
աւելի մենակ տեսնելու բաղդը չեմ ունեցել
դեռ ես...:

—Ի՞նչ անեք, բարեկամ, ինքներդ էք տեսնում,
որքան ես զբաղված եմ այստեղ, կրկնեց նա իր
սովորական պատճառարանութիւնը... ինձ պէս
աշխատող, բանուր մարդը միթէ իրաւունք, կամ
միջոց ունի հանգստանալ, աւելացրեց նա փոքր
ինչ դառնութեամբ:

Նա հանել էր արդէն իր զլխարկն ու ձեռնոց-
ները, ուղղել էր իր մաղերը հայելիի առջև, բայց
դարձեալ չէր նստում... Նա կամ մօտենում էր
սեղանին, որի վրա դարձեալ էին նստանները,
կամ մի վայրկեանով մտնում էր իր ննջարանը, նո-
րից դուրս էր գալիս, կրկին մօտենում էր կամ
հայելիին, կամ իր գրեթէ փոքրիկ պահարանին,
նայում էր ծոցի ժամացոյցի վրա, անդադար կրկ-
նելով ձեռքերէն, բարեկամ, մի րոպէ, և ես պատ-
րաստ եմ ձեզ լսելու...:

Վերջապէս նա նստեց մի բաղկամտով վրա,
փոքր ինչ հեռու ինձանից, մի տեսակ հառաչանք
հանելով:

—Et me voilà...:

ամսագիրը ջարտով իր առաջին խօսքն է ասում
կաթողիկոսական թեկնածուների նկատմամբ: Ա-
մեն ինչ կշռադատելով, ի նկատի ունենալով
Հայաստանեայց Եկեղեցու Մայր Աթոռի դերա-
դին շահերը, հոգեւոր դասակարգի նշանակութիւ-
նը ազգի մէջ, աշխարհականներու անկախութիւ-
նը Եկեղեցու պետից, «Մուրճ» ամսագրի խմբա-
գրութիւնը վստահանում է սորանով իր անկեղծ
կարծիքը յայտարարել, որ դրութեան բարձրու-
թեան վրա կանգնած նա ճանաչում է այսօր մի-
միակ անձնական անդուգական խրիմեան Մկրտիչ
արքեպիսկոպոսին»:

Վրաց «Իւլիթա» լրագիրը իր 210-րդ համա-
րում տպված մի առաջնորդողովում գրում է վրաց
թատրոնի ներկայ անմիջական դրութիւնը: Ահա
տաան և երկու տարի է, ասում է լրագիրը, որ
վրաց թատրոնը գոյութիւն ունի, բայց ոչ մի տա-
րի թատրոնը այսպիսի օրհասական դրութեան
մէջ չէ եղել, ինչպէս այժմ: Այս տարի վրաց
թատրոնը տուել է չորս ներկայացում և այդ չորս
ներկայացման ժամանակ թատրոնական դահլի-
ճում հասարակութեան փոխարէն շրջում է սառն
քամի: Լրագիրը մեղադրում է վրաց թատրոնի
կոմիտէին, որ նա դերասանական խումբը կազ-
մել է խօս-աւեր և անհմտ օրհնը, բնիկ
վրաց դահլիճի դատարկ թեոքներին նայելով
աւելի բթմամբ և աւելի մոռանում են իրանց
ասելիքը: Արդիւնքը չէ ծածկում ներկայացման
ծախսը: Լրագիրը երկար ողբալուց յետոյ պաղա-
տում-աղաչում է Աստուծոյ, որ նա այն օրը չը
ցոյց տայ, որ վրաց թատրոնի դռները փակվին:

Ինչպէս յայտնի է, ամեն տարի հոկտեմբերի
1-ին, Անդրկովկասեան երկաթուղով Թիֆլիսից
Ուստաւորների ահազին բազմութիւն է դիմում
դէպի Մցխէթ, սակայն այս տարի վատ եղանակի
պատճառով ուստաւորներ Թիֆլիսից դէպի Մցխէթ
չառ քիչ գնացին, և այդ պատճառով երկաթու-

—Էվելինա, նստեցէք խնդրեմ իմ կողմին, այս
դիմանի վրա, ես շատ բան ունեմ ձեզ հարցնելու,
ասեցի ես:

—Եթէ անպատճառ ցանկանում եք...
Նա վերկացաւ տեղից և դանդաղ քայլերով
մօտենալով դիմանի, նստեց իմ կողքին:

—Էվելինա, ես եկայ ձեզ մնաք բարեկամ, ես
բայց նախ քան հեռանամ այստեղից, ես պէտք
է իմանամ ձեր բերանից ի՞նչ է լինելու իմ կեան-
քիս վիճակը:

—Ես չեմ հասկանում ձեզ, բարեկամ:

—Ասեցէք, Էվելինա, դուք դարձեալ սիրում
էք ինձ առաջվայ պէս, թէ ոչ...:

—Այո, միթէ դուք կարող էիք կասկածել, և
ինչ հիման վրա...:

—Եթէ այդպէս է, տուեցէք ինձ մի խոստում,
որդ հաստատե՛ք ձեր խօսքերի անկեղծութիւնը,
տուեցէք ինձ մի ապացոյց...:

—Երբեք եմ ձեզ, բարեկամ, որ ես այն
աստիճան սիրում եմ ձեզ, որ եթէ դուք այ-
սօր անկախ մարդ լինէիք, ես այս րոպէիս
պատրաստ կը լինէի ձեր կինը լինելու, բայց...:

—Բայց ի՞նչ...:

—Բայց ես անկարող եմ ձեզ այս րոպէիս այդ
ապացոյցը տալ, քանի որ դուք ինքներդ...:

—Դու եւ ձգտում եք դէպի ձեր անկախու-
թիւնը... Եւ գուցէ շատ տարիներ կանցնեն,
մինչև որ կը հասնէք դրան...:

—Իսկ միթէ դուք այնքան խոր, անկեղծ կեր-
պով չէք սիրում ինձ, որ պատրաստ լինէիք
սպասել մինչև որ ես հասնեմ այդ անկախու-
թեանը...:

—Բարեկամ, դուք դարձեալ հարցեր էք ա-
ռաջարկում ինձ, արտասանեց նա անտարբեր
ձայնով, ինձ վրա չը նայելով և իբր թէ մեծ ու-

ղու վարչութիւնը 50 հազար ռուբլու վնասի են-
թարկվեց, քանի որ ապրանքատար գնացքը այդ
օրը Բաթումից Թիֆլիս էր գալիս և 12 շոգե-
շարժ կառքեր դարդակ անց ու դարձ էին անում
Թիֆլիսից Մցխէթ կայարանը:

Ինչպէս յայտնի է, մինչև այժմ, Էվելինայի
լուսով լուսաւորվում է միակ Թիֆլիսի կառու-
ծական բանկի թատրոնը, իսկ ներկայ ամիս
վերջից Էվելինայի լուսով պէտք է լուսաւորվեն
Գլխավորային փողոցի և Գլխավորային պողոտայի
մաղաղիներից շատերը: Բացի այդ Թիֆլիսի ու-
րիշ շատ խանութներ էլ պատուիրել են իրանց
համար Էվելինայի լուսաւորութիւն:

Մեր քաղաքային ուր դուռնա կատարելապէս
անտարբերութեամբ է վերաբերվում դէպի Թիֆ-
լիսի փողոցները, որոնք հետզհետեւ ծածկվում
են ցեխով և քարոքանք են լինում: Անձ-
րների ժամանակ մի քանի փողոցների մէջ
գոյանում են այնպիսի կեղտոտ ջրի լճեր, որ
մարդ փողոցի մի փիղը միւսը պէտք է նստով
անցնի:

ԹԷՕԴՍԻԱՅԻՑ մեզ գրում են. «Այսօր Թեօդո-
սիայի համար մեծ տոն էր, որովհետեւ առաջին
անգամ երկաթուղու գնացքը Ջանկոյ կայարանից
Թեօդոսիա հասաւ: Ժողովուրդը մեծ ոգևորու-
թեամբ դիմաւորեց առաջին գնացքի գալուստը»:

Վրակի, հոկտեմբերի 6-ին, Վովկասեան զլխա-
ւոր կառավարչապետ զինեալ-աղկաւանտ Ս. Ա.
Շերեմետեւ Թիֆլիս ժամանեց:

«ԿԱՅԱՅԷ» լրագիրը հազարում է, որ շաբաթ,
հոկտեմբերի 5-ին, անդրկովկասեան երկաթուղու
երեկոյան գնացքով Թիֆլիսից Բագուով ճանա-
պարհ ընկաւ Պարսկաստան Հիւսիսային Ամբրի-
կայի Միացեալ-Նահանգներից մեր քաղաքն եկած

շաղրութեամբ հետազոտելով իր աշ բազուկը
զարդարող ապարանջանը... Իսկ եթէ ես ձեզ նոյն
հարցերն առաջարկէի, դուք ի՞նչ կասէիք, վերջաց-
րեց նա իր զգեստն ուղղելով և կենտրոնացնե-
լով իր կօշիկների ծայրերի վրա:

—Ի՞նչ հարցեր, Էվելինա, ասեցէք ի՞նչ հար-
ցեր...:

—Օրինակ... Ի՞նչ ասեմ... Արդեք խոստա-
նում էք ինձ, որ երկու, կամ նոյն իսկ մի տար-
վայ ընթացքում չէք սիրի ուրիշին... կամ ար-
դեք կարող էք հաստատապէս խոստանալ, որ
մի, կամ շատ շատ երկու տարվայ ընթաց-
քում անպատճառ անկախ մարդ կը դառնաք և
այն...:

—Առաջինը կարող եմ հաստատապէս խոստա-
նալ, իսկ երկրորդը ոչ, քանի որ առաջինը, ձեզ
միշտ հաւատարիմ մնալը ինձանից է կախված,
իսկ երկրորդը կարող է կախված լինել և կողմ-
նակի արգելադրութեամբ պատճառներից...:

—Ուրեմն տեսնում եք...:

—Դրանից ի՞նչ էք հետեւնում, Էվելինա...:

—Այո, որ չը նայելով թէ մենք երկուսս մի-

մանց սաստիկ սիրում ենք, բայց մեզանից բո-
լորովին անկախ պատճառներ, մեր ցանկութեան
հակառակ, կարող են արգելք լինել այդ սիրոյ յարա-
տուութեան: Եթէ ձախաձուգել կազմով մեզ ճշմա-
րիտ վիճակված է ամուսնանալ, դա անպատճառ
կը կատարվի էլ, և հաւատացնում եմ ձեզ՝ բարե-
կամ, որ ես առաջինը կը լինեմ, որ ամենաերջա-
նիկ կին կը համարեմ ինձ... Բայց...:

—Դարձեալ ասեցէք, ես լսում եմ:

—Բայց եթէ, դիցուք, այդ չի լինի, եթէ այդ

չը պիտի լինի, ի՞նչ ենք շարունակում փոխա-

դարձապէս կաշկանդել միմեանց աղաւորութիւնը,

ինչի, ասեք խնդրեմ, միմյանց յոյսերով ապրե-

ինն անձինք: Նրանց թույլ տրվում է 7 կաթո-
լիկ միանձնակից: Նրանք բնակություն կը հաս-
տատեն Պարսկաստանի Ռեմի քաղաքում:

Կիրակի, հոկտեմբերի 6-ին, հայոց դրամատի-
կան խումբը Թիֆլիսի կալուածական բանկի
թատրոնում ներկայացրեց Սունդուկեանցի «Պէպո»
կոմիդիան և «Բաժնեդրոշի պանդուկը» վոդևիլը:
Պէպոյի դերը այս անգամ խաղում էր պ. Գարե-
թինեան, Սունդուկեանի դերը՝ պ. Արաքսեան,
Կալուածական դերը՝ պ. Արաքսեան, իսկ Գիւրգի
պ. Տէր-Գալսեօն: Բոլոր դերակատարները ընդ-
հանրապէս խղճմտանքով կատարեցին իրանց դե-
րերը և այդ պատճառով էլ ներկայացումը, կարե-
ւի է ասել, որ անողորմ ընդունեցաւ: Միայն պ.
Գարեթինեան Պէպոյի դերում մի քիչ թույլ էր,
քանի որ Թիֆլիսեցի շատ լաւ Պէպոյեան են տեսել
հայոց բեմի վրա: Մանաւանդ վատ տպաւորու-
թիւն էր գործում պարոնի արտասանութիւնը և
Թիֆլիսի բարբառին ընտելացած չը լինելը: Օրի-
նակ, փոխանակ ասելու «չիմ գնայ» նա ասում էր
«չեմ գնայ» և այլն: Օր. վարդուհի, պ. պ. Արաք-
սեան, Արաքսեան, Տէր-Գալսեօն շատ լաւ կա-
տարեցին իրանց դերերը և ծափահարում էին հա-
տարակոթիւնից: «Բաժնեդրոշի պանդուկը» վոդևիլը,
ինչ ասել կուզէր, որ լաւ կը խաղացվէր, քանի որ
գլխաւոր դերերը կատարում էին պ. պ. Թուրեան և
Տէր-Գալսեօն, որոնք իրանց գեղեցիկ խաղով
բռնու ծիծաղ էին առաջացնում հասարակութեան
մէջ: Թատրոնում բաւական ժողովուրդ կար:

Մեզ գրում են ՆՐԵՆԱՆԻՑ. «Խաղողաբաղն ար-
դէն սկսվել է այս տարի. բերքն այստեղ շատ
առատ է, այնպէս որ խաղողի խալվաբը ծախ-
վում է այժմ 15—18 բուրլով, այն ինչ անցեալ
տարի ծախվում էր 27—30 բուրլով»:

Երևանից մեզ գրում են, որ հայոց թատրոնա-
կան խումբը որոշեց տալ ամսին 13-ին հայերէն
մի ներկայացում յօգուտ Ռուսաստանի սովխա-
յների: Կը ներկայացնեն «Թուղթ խաղացողի
կեանքը» պիէսան: Կառավարութիւնը ուրախու-
թեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Ժողովրդագր. ՏՕՐԸ ԳԵՄԱՆԱՅՈՒՄ

Անցնելով վերջապէս շարժական մանր խա-
նութիւնների երկար շարքը դուք մտնում էք մի լայն
հրապարակ, ուր բառի բուն նշանակութեամբ

լով, իրար արդեն կատարեալ ազատութիւնը
վայելելու...

—Ես հասկանում եմ, դուք, ուրեմն, մի բան
վճռած ունեք և ուզում էք որ ես ազատեմ ձեզ
ձեր տուած խօսքից...

Էվէլինա վեր էր կացել զիվանից և մօտեցել
էր պատուհանին, երեւո ինձանից դարձնելով
դէպի պատուհանի ապակին:

—Ամենին ոչ, ասեց նա մի փոքր լուռութիւնից
յետոյ... Ես միայն ասում եմ, որ յոյսերով և
այն էլ, գուցէ, միմիայն երազական յոյսերով
ապրելով չը պէտք է իրար արդեն գործողու-
թեան կատարեալ ազատութիւնը վայելելու: Մի-
խօսքով կը լինի,—ասելի լաւ, չի լինի,—այն
ժամանակ մեր երկուսիս խղճմտանքը գոնէ հան-
գիստ կը լինի, որ մենք փոխադարձաբար ար-
գիւք չը դարձանք իրար ազատութեան կատա-
րեալ վայելելուն...

Արեւն գլխիս էր դարկել, ես չը գիտէի ի՞նչ
ասեմ... Ես պարզ տեսնում էի այժմ, որ վերջին
ժամանակները իմ առաջվայ իղէալիստ Էվէլինա
բաւական մեծ աջողութեամբ օգտվել էր չըջա-
պատողների գործնական դասերից...

—Աղաւթ եմ ձեզ, եկէք և կրկին նստեցէք իմ
կողքին, Էվէլինա:

Նա լուռ կերպով հնազանդվեց ինձ.
Ես վերցրի նրա փոքրիկ ձեռքը և ուղիղ նրա
աչքերին նայելով, հարցրի:

—Ասեցէք, ձեռքը սրտին դրած, դուք կարող
էք յուսալ ուրիշի հետ երջանիկ լինելու...

—Գուցէ և ոչ, բայց դա շատ համարձակ եղ-
րակացութիւն է, որ ասում էք, դուք, իմ արտա-
սանած խօսքերից, շարունակեց նա, իր ձեռքը
փոքր առ փոքր իմ ձեռքից յետ քաշելով... Ես
հաւատացած եմ, որ ձեր բացակայութեան երկու
տարվայ ընթացքում ես ոչ որեի հետ չեմ ամուս-

նանք գցելու տեղ չը կայ բազմութիւնից: Հարա-
հրօցից, բաղձաձայն, բաղձաձայն, անթիւ երա-
ժշտական գործիքների՝ ականջ խլացնող ձայնից
չը դիտէք ուր դիմել: Առաջ էք գնում, ձեզ զեռ-
նում էք լարախաղների, միմանների, ծաղրածու-
ների, մարմնամարզների, օլիմպիկների խմբի մէջ.
աչ էք գնում վարժեցրած կապիկների, արջերի,
խոզերի, այծերի, էշերի, աղունների, շների,
ջայլամների, եղջերուների էք հանդիպում, ձախ-
կողմում փայտի պտտող ձիւնների, ճռճող սահ-
նակների, նաւակների, ճլորթիների զիւլայն թը-
ւիչներին էք պատահում. այստեղ 20-30 քնարա-
ձուներ—գեղեցիկ խաղալիքներ իրանց աղջակն
հաղւատով երգում են և ամուս, այնտեղ

Kunstmuseum, պանօրամա, մանկական թատ-
րոն, ութաշափ, խաբեքայանոց, նորանից փո-
քրը ինչ դէպի ձախ՝ արձանների, կիսար-
ձանների ժողովածուներ, հնութիւնների, քանդա-
կներ, լուսանկարներ, օրսորդատուն, հրացանա-
ձգութիւն, դիւ արքանականներ, իսկ դէպի աջ՝
ընդարձակ ասպարիզում վազում են, դտակ գցում,
դրամ խաղում, ութ փորձում, թուփներ գործում
վելօսիպէշներով մրցում և այլն և այլն: Անցնում
էք այդ Բաթիմից և մտնում էք մի ուրիշ հրա-
պարակ—սա Volksfest-ի ամենաշատ բաժին է,
նրա հողին, կեանք, տուողը. այստեղ 30-ից աւելի
րէստորաններ են շինված, իւրաքանչիւրում 70—
100 երկար սեղաններ դրած, որոնց շուրջը բոլո-
րեւ են բաքոսի երդունալ երկպագոները և
կամ սիրողները և միմանց ետևից դատարկում
են զարեջրով լի հաստափոր բաժակները, ձերու-
նի, այր, երիտասարդ, պատանի, կին, աղջիկ,
պարոն, ծառայ, առանց խտրութեան, ուրախա-
նում են, երգում օրկեստրի հետ, ճռռաններով
խլացուցիչ աղմուկ հանում, ոտներով սափա-
հարում, բռնեցնքներով, կամ ձեռնափայտե-
րով սեղաններին խփում, նստարանները ձո-
ճում, շուռցնում... Տէր իմ Աստուած, ինչ բաղ-
մաղան դէմքեր, հաղւատներ, ձայներ, ուրա-
խանալու, զուարճանալու միջոցներ, արտայայ-
տութիւններ: Այստեղ 70-ամեայ ճռռան խաղացող
ձերուսու ծնկին նստել է մի 15 տարեկան պա-
տանի և այնտեղ հարուստ գործարանատէրի հետ
բանտը բաժակ բաժակի է խփում, համբուր-
վում: Որքան ազատութիւն, հաւատարմութիւն, որ-
քան ներողամտութիւն... Այսօր Volksfest է, ամի-
նա թող չէ տրվում, ոչ որ չէ նեղանում, ոչ որ
չէ վիրաւորվում: մինչև անգամ ահա այն պա-
տուախնդրի երիտասարդը, որի երեսին սպինե-
րից ազատ տեղ չը կայ, բոլորն էլ մենամարտու-
թեան մէջ պատահալութեան համար է ստացել:

Նանայ, սակայն ի՞նչ միտք ունի, որ մենք եր-
կուս էլ միմանց հետ խոստովանելով կապված
մնանք, քանի որ կարող է հաւանականութիւն լի-
նել, որ մենք երկուսու էլ երկուս տարուց յետոյ
նմանապէս իրար հետ չենք ամուսնանայ...

—Ո՛վ է ասում, ամեն բան կա ո՞ր է պատա-
հել:

—Ես հենց այդ եմ ասում, ուրիշ ոչինչ: Իսկ
եթէ կատարվի մեր ցանկացածը,—ասելի լաւ: Եւ
որովհետեւ մենք պէտք է իրար ազատենք փո-
խադարձապէս տուած մեր խոստովանելից, ու-
րեմն իմ կարծիքով աւելի լաւ է դուր տեղը չը
պահենք և այն յիշատակները, որոնք այսպէս թէ
այնպէս պարտաւորեցնում են մեզ երկուսիս,
գուցէ և բոլորովին ապարդիւն կերպով, կապված
մնալ մեր տուած խոստովանելի հետ...

—Ի՞նչ յիշատակների մասին էք խօսում...

—Ես կը խոսեմ ձեզ, ասեց նա երեսը ինձա-
նից դարձնելով և անպատակ կերպով նայելով
մի ինչ որ փոքրիկ սեղանի վրա, որը զրկւած էր
սեննակի աջ անկիւնում, ես ձեզ կը խնդրեի
կամ ինձ յետ դարձնել, կամ ոչնչացնել իմ նա-
մակներն ու իմ պատկերս...

Նրա բարձր կուրծքը սաստիկ երբեմն էր,
նա դժուարութեամբ շուշ էր քաշում, ես պարզ
և որոշ կերպով էի լսում նրա սաստկացած չնչա-
ռութիւնը...

—Եւ դուք, Էվէլինա, դուք ձեր բերանով այդ
տեսակ զոհաբերութիւն էք պահանջում ինձանից:
շատ բարի, ես կը վերադարձնեմ ձեզ ձեր բոլոր
նամակները, որ ես պահում էի ինձ մօտ սրբու-
թեան պէս, կը վերադարձնեմ ձեզ, որովհետեւ
ձեր նամակները դարձեալ ձեզ են պատկանում,
բայց ձեր պատկերը երբեք յետ չեմ դարձնի: ձեզ
տրվեցեալ ես ինձ է պատկանում, նախ՝ նրա
որով ձեր ձեռքով գրված է ինձ ուղղված ձեր

մինչև անգամ նա թող է տալիս, որ իրան ծաղ-
րեն, ձեռք առնեն... Անցնում էք և այս մանկա-
ցած հասակաւորների, առնացած մանուկների ու-
րախ բաժինը և ահա միւս հրապարակը սկսվում
է մէկ հրաշալի կանաչադարձ, նախշուն կամա-
րով, որը կազմված է և զարդարված է դաշտային
ցորենով, գարիով, հաճարով, եղիպտական ցորե-
նով, զազարով, բողբոջով, բաղկով, սոխով, սխտո-
րով, լոբիով, բակլայով, մաշով, խնձորով, տան-
ձով, սալօրով, դդուհով, դեղձով, խաղողի օղիով:
ներով և հազար ու մի տեսակ հացաբոլակ-
րով, բանջարեղէններով ու պտուղներով. կամարը
չինված է այնքան գեղեցիկ, այնքան նուրբ նկար-
ներով և նախշով է զարդարած, այնպիսի ճաշա-
կով և հմտութեամբ դասաւորված, որ մարդ հիա-
նում է: Անցնում էք այդ գեղեցիկ կամարի տա-
կով և ձեր առջև բացվում է մէկ ընդարձակ
հրապարակ, որի չորս կողմերում շինված են
նոյնանման կամարներ, իսկ արեւելեան ճակատին
կենտրոնական հինգկամարեան բարձր գորշակա-
զարդ ֆրոնտօնը, այդ կամարներից իւրաքանչիւ-
րի տակ կարգով դրված են երկրագործութեան
և գիւղատնտեսութեան վերաբերեալ բոլոր առար-
կաներ, մթնոլորտի և գործիքներ. մէկի տակ ի
ցոյց են դրված երկրագործական բազմատեսակ
մեքենաներ և գործիքներ, դրանց մօտ կանգնած
են 10—15 մարդիկ և հասկանալի լեզուով բացատ-
րում են բազմաթիւ հետաքրքրիչ գիւղացիներին
այս կամ այն մեքենայի սխեման, կազմութիւնը,
գործադրութեան ձևը, տուած օգուտները և այլն:
միւս կամարի տակ փետակները, մեղրաբուծու-
թեան, կաթնատնտեսութեան վերաբերեալ աման-
ներ, կտրիչներ, տաշեր, մեքենաներ և այլն, եր-
րորդի տակ դրված են բոլոր հացաբոլակների տե-
սակները, իւրաքանչիւրից 20—30 տեսակ: Այս-
տեղ կայ անդլիական, ամերիկական, ֆրանսիա-
կան, ունգարական, գերմանական, տեղային, ոււ-
սական, Աֆրիկայի, Ասիայի ցորեն, գարի, հա-
ճար, կարմօֆէլ, որոնք բոլորն էլ ցանկացած
են և մշակված Հոնհենհայմ ձեմարանի Ver-
suchsfeld-ում, փորձական դաշտում և դրանց
մօտ կանգնած է երկրագործութեան պրօֆէսորը,
բացատրում է նրանց այս տարվայ հացահատիկ-
ների վրա արած դանաղան փորձերի տուած
արդիւնքը, ցոյց է տալիս տօկոսական ձիւղ հա-
չիկները: Գիւղացիների հարցեր են առաջարկում
և պրօֆէսորը բոլորն էլ բաւականութիւն է
տալիս, հասկացնում, կրկնում նոյնը 5—10—20
անգամ առանց յոգնելու, նեղանալու, առանց
զրկելու ռադ անկուռ ցանկութեամբ, ընդհակա-

սիրալիք նուէրը և երկրորդ՝ այդ պատկերն էր, որի
սիրելի գծագրութիւնները ողորդում էին ինձ
դէպի գործունէութիւն, տալիս էին ինձ այժմ
և զօրութիւն ապրելու, ձգտելու և յուսալու,— և կը
շարունակեմ էլ ապագայում... Բաւական է քա-
ղէն այդ զոհաբերութիւնը, որ ես անում եմ վի-
րադարձնելով ձեզ ձեր նամակները, աւելի մեծ է
անհարկ զոհ ինձանից մի պահանջը... Եւ
մինչև անգամ եթէ դուք վճռել էք արդէն այն
ժամանակամիջոցում, մինչև որ ես կաւարտեմ իմ
ուսումն, որը ձեզ գուցէ չափից դուրս երկար է
թվում, անպատճառ ուրիշի հետ ամուսնանալու,
ասեցէք խնդրեմ ձեզ ի՞նչ փոխի, որ ձեր նամակ-
ները և ձեր պատկերը ընդմիջող ինձ մօտ կը
մնան... Նրանք ոչ ձեզ, ոչ էլ ձեր ապագայ ա-
մուսնու հարկաւոր չեն, իսկ ինձ հարկաւոր են,
ինձ անհրաժեշտ են... Գուք ինձ չափից դուրս
լաւ էք ճանաչում, որպէս զի կարծէիք թէ ես
այն աստիճան ստոր մարդ լինի, որ կարող լի-
նէի ի չար գործ անել ձեր նամակներն ու ձեր
պատկերը. ոչ, բայց այստեղ մի ուրիշ պատճառ
կայ, որը ես գուշակում եմ... Գուք վճռել էք,
այո, վճռել էք ամուսնանալ, կամ գոնէ չէք ու-
ղում, որ իմ ձեզ հետ ունեցած բարոյական
կապը արդէն լինի ձեզ, եթէ կամ մենայնիւ
ամուսնանալ և չը նայելով որ շատ լաւ գիտեմ
թէ այն օրից երբ ես կիմանամ թէ դուք ամուս-
նացել էք ուրիշի հետ, ես երբեք չեմ գալ ձեզ
տեսնելու, շատ և շատ հեռու կը լինեմ ձեզա-
նից, ուրեմն ձեր ապագայ մարդը երբեք էլ չի
իմանալ թէ դուք ինձ մի ժամանակ սիրում էիք,
երբեք էլ չի իմանալ թէ ինձ մօտ պահված մնա-
ցին, որպէս սրբութիւն ձեր նամակներն ու ձեր
պատկերը,—բայց այնու ամենայնիւ դուք ուղղում
էք մարդու հանդէս խղճմտանք ունենալ, որով-
հետեւ գիտե՛ք թէ պատահած դէպքում դուք երբեք

աւելը, նա չափազանց ուրախ է, որ իր գիտ-
նական փորձերով հետաքրքրվում է ժողովուրդը,
ողորդում է նրանցով... Գրան հարեան կամարի
տակ Գերմանիայի և գլխաւորապէս Վերտեմ-
բերգում հանող բոլոր ծառայողները,
տանձ, խնձոր, խաղող, սալօր, դեղձ, և այլն, տե-
սակներով մօտ 35 և իւրաքանչիւր պտուղից
20 տեսակ: Այսպէս օրինակ, առաջին Նի-ի տակ
դրված է դիցուք մի վայրենի տանձնու քարի
նման ամուր, փոքրիկ, կապտադոյն դառը և ու-
տիպ պտուղը, № 2, 3, 4, 7, 10, 20 նոյն վա-
րենի տանձնու պարարտացման, պատուաւոր և
այլ միջոցներով աղւսացնելու յաջողական առ-
տիճաններն են և այն տարբերութիւնը, որ գտնու-
մ է № 1 և 5-ի տակը. ձեզ դարմացնում է 5
տարվայ ընթացքում փոքրիկ, կապտոյն, կարի
տանձը, շնորհիւ կանոնաւոր մշակութեան, մեծացել
չալիացել, քաղցրացել և գոյնը աւելի դեղնա-
րել է. իսկ № 1 և 20-ի տարբերութիւնը աննկա-
րագրելի է. մէկը 7 լոտ կշռող տանձը այսօր կը
ուսում է 1 ֆունտ 14 մսխալ, այնքան հիւթալ
քաղցր, դեղին, շքեղ տեսք ու համուսնի, որ եթէ
չը լինէին նրա յաջողական աստիճանները, դուք
անկարելի է, որ հաւատայիք: № 20 տանձի ֆունտը
ծախվում է 80—90 պֆենիգով, մինչև անգամ 1
մարկով, այսինքն 35—40 կօպէկ. ահա ինչ է նշա-
նակում կանոնաւոր մշակութիւն, խնամքը: Նոյն
աղւսացման են հասել վայրենի խնձորը, նաև շը-
րորը, դեղձը, խաղողը և միւս պտուղները: Ինչ-
պէս ծառայողներին, նոյնպէս և բոլոր դաշտա-
յին արդիւնաբերութիւնները Հոնհենհայմ փորձա-
կան դաշտերից են: (Հոնհենհայմ այդ հետաքրքրի
և օգտաւէտ դաշտի մասին ես կը գրեմ մի ուրիշ
անգամ, որի հետ ծանօթանալու անօգուտ չի լի-
նի մեր կալուածատէրներին և գիւղացիներին):
Այս հրապարակի մէջ, կենտրոնում, շինված է թա-
ղաւորական ընտանիքի և բարձրաստիճան ան-
ձանց համար հովանոց երկու ֆլիգելներով, դառ-
դարված պատկերով, ծաղկահիւսերով և դրօշակ-
ներով. իւրաքանչիւր տարի ինքն Վերտեմբերգի
թագաւորն է բացում Volksfest-ը, իսկ այս տա-
րի նրա հիւանդութեան պատճառով հանդէսը բա-
ցեց երկրագործութեան միջոցները: Հովանոցի
շուրջը շինված է ձիարշաւների առաջնորդը 2000
մետր շրջագծով. 25-ին նշանակված է գիւղացի-
ների ձիերի ձիարշաւ 4 մրցանակներով
1000, 500, 500 և 300 մարկ, 26-ին գինուս-
րականների ձիարշաւը 6 մրցանակով, երկուսը
2000-ական, երկուսը 1500-ական, մէկը 1000,
իսկ վեցերորդը 800 մարկ: Կենտրոնական
կամարի տակից անցնելով, մտնում էք մի

այնքան քաջութիւն, հերոսութիւն չէք ունենալ
ասել ձեր ապագայ մարդուն. «Այո, ես սիրում
էի այն երիտասարդին և նա էլ ինձ սիրում էր:
Նրա սէրը հասկացրեց ինձ իմ սիրած երաժշտու-
թեան խորհրդաւոր, վե՛հ դաղտնիքը, իսկ իմ սէրը
մենցեղեք նրա մէջ իր հոգու ամբողջ գործութեան
իր ազգին ծառայելու վերաբերեալ: Կամ հե-
րոսութիւն չէք ունենալ ասել նրան. «Այո, նա
սիրում էր ինձ անսահման սիրով, որովհետեւ
տարիների ընթացքում իմ սիրտը նրա համար
այն միակ տարբ տաճարն էր, որի մէջ նա ապ-
տօրէն կարող էր պաշտել իր իղէալները»:

Անչափ յուզված, ես այլ ևս չը կարողայ
շարունակել... Ես իմ ականջներով պարզ լսե-
լի իմ սրտի բաբախումները: Ես նայելի չէի
լինայի վրա:

Նա նստած էր իմ կողքին, զիվանի վրա, փոքր
ինչ կուացած, արմունկները ծնկների վրա դրած,
իր դէմքը երկու ձեռքերով ծածկելով...

Եւ շարունակելով իր այդ զիւրք պահպանել
նա երկար լուռութիւնից յետոյ, հաղիւ լսելի ձայ-
նով շնչացաւ:

—Լաւ, թող մնան ձեզ մօտ իմ նամակներն
էլ, իմ պատկերն էլ...

—Բայց, Էվէլինա, մի խօսք եւ: Մեր անցեալ
սիրելի ամուսնով, տուեցէք ինձ ձեր երկու ձեռքերը և
բացատրեցէք ինձ ինչ պիտի լինի իմ ապագան...

Նա հեռացրեց իր ձեռքերն իր դէմքից և ա-
ռանց մի խօսք անգամ արտասանելու, թող
տուեց ինձ վերցնել իր ձեռքերը և պահել նրանց
ձեռքերիս մէջ:

—Միթէ այսուհետեւ ես պիտի ապրեմ անցեա-
լի յիշատակներով և դուք բաւականանալով ձեր
անցեալ նամակներն ու ձեր պատկերը ինձ շնոր-
հելով, այլ ևս չէք շարունակի գրել ինձ և չէք
թող տալ, որ ես էլ գրեմ ձեզ...

